## *4. 4. Ապրանքների արտահանում և ներմուծում*

### *4.4.1. Արտաքին առևտուր*

***Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը***: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-հունիսին, փաստացի գներով, կազմել է 296103.5 մլն. դրամ կամ 555.6 մլն. դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը` 72209.5 մլն.դրամ (135.7 մլն.դոլար) և ներմուծումը` 223894 մլն. դրամ (419.9 մլն.դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 151684.5 մլն.դրամով (284.3 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների` 132228.2 մլն. դրամով (247.6 մլն. դոլարով):

2000թ. հունվար-հունիսին, 1999թ. հունվար-հունիսի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 14.3%-ով: Ընդ որում, արտահանումն աճել է 16.8%-ով, իսկ ներմուծումը` 13.5%-ով: Բացասական առևտրային հաշվեկշիռն աճել է 12.1%-ով: Արտահանման ծավալը 2000թ. հունիսին մայիսի[1] նկատմամբ նվազել է 25.3%-ով, իսկ ներմուծումը` 37.4%-ով:

2000թ. հունվար-հունիսին ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 63731.2 մլն.դրամ (120.1 մլն.դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 21.6%-ը (1999թ. հունվար-հունիսին` 24.7%), իսկ այլ երկրների հետ` 232372.4 մլն. դրամ (435.5 մլն. դոլար) կամ 78.4%-ը (1999թ. հունվար-հունիսին` 75.3%), որից Եվրամիության(ԵՄ) երկրների հետ` 110597 մլն. դրամ (207.8 մլն. դոլար) կամ 37.4%-ը (1999թ. հունվար-հունիսին` 33.9%):

2000թ. հունվար-հունիսին ԱՊՀ երկրներ են արտահանվել 16384.8 մլն.դրամի (30.8 մլն. դոլարի) և ներմուծվել` 47346.4 մլն.դրամի (89.3 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 30961.6 մլն. դրամով (58.4 մլն.դոլարով): Նույն ժամանակաշրջանում այլ երկրներ են արտահանվել 55824.7 մլն.դրամի (104.8 մլն.դոլարի), իսկ ներմուծվել` 176547.7 մլն. դրամի (330.7 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 120722.9 մլն. դրամով (225.8 մլն.դոլարով):

1999թ. հունվար-հունիսի համեմատ 2000թ. հունվար-հունիսին ապրանքների արտահանումն ԱՊՀ երկրներ աճել է 6%-ով: Արտահանումը դեպի այլ երկրներ աճել է 20.4%-ով: Ներմուծման ծավալը ԱՊՀ երկրներից նվազել է 1.7%-ով, իսկ այլ երկրներից աճել է` 18.5%-ով:

**Արտահանման և ներմուծման ծավալները 1999 և 2000թթ. հունվար- հունիսին, ըստ ԱՊՀ և այլ երկրների**

***Արտահանում (մլն. դոլար)***




[1] *Բեռնամաքսային հայտարարագրերի հունվար-հանիսի տվյալների բազայի հիման վրա(ստացված ՀՀ պետեկամուտների նախարարությունից) կատարվել է մայիս ամսվա տվյալների ճշգրտում*

*Ներմուծում (մլն. դոլար)*




**Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-հունիսին, ըստ առանձին երկրների**

| Երկրի անվանումը | ԱՐՏԱՀԱՆՈՒՄ | | | ՆԵՐՄՈՒԾՈՒՄ | | | Առևտրային հաշվեկշիռը, հազ.$ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Արժեքը | | Տեսակ. կշիռը | Արժեքը | | Տեսակ. կշիռը | |
| | մլն. դրամ | հազ. $ | | մլն. դրամ | հազ. $ | | |
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | 72209.5 | 135668.6 | 100.00 | 223894.0 | 419939.8 | 100.0 | -284271.27 |
| որից՝ | | | | | | | |
| ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ | 16384.8 | 30819.1 | 22.72 | 47346.4 | 89257.6 | 21.25 | -58438.49 |
| այդ թվում՝ | | | | | | | |
| Ռուսաստան | 8593.8 | 16117.4 | 11.88 | 36315.4 | 68533.9 | 16.32 | -52416.54 |
| Թուրքմենստան | 1526.7 | 2868.9 | 2.11 | 333.6 | 627.8 | 0.15 | 2241.11 |
| Վրաստան | 4455.1 | 8416.2 | 6.20 | 6723.3 | 12634.6 | 3.01 | -4218.39 |
| Բելոռուս | 185.9 | 350.0 | 0.26 | 143.0 | 269.9 | 0.06 | 80.07 |
| Ուկրաինա | 946.5 | 1793.8 | 1.32 | 3047.9 | 5714.8 | 1.36 | -3920.99 |
| Ղազախստան | 212.2 | 399.4 | 0.29 | 289.9 | 546.0 | 0.13 | -146.60 |
| Այլ երկրներ | 464.6 | 873.5 | 0.64 | 493.3 | 930.7 | 0.22 | -57.15 |
| | | | | 4.6 | | | |
| ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ | 55824.7 | 104849.4 | 77.28 | 176547.7 | 330682.2 | 78.75 | -225832.78 |
| այդ թվում՝ | | | | | | | |
| ԵՄ երկրներ | 30974.8 | 58189.3 | 42.89 | 79622.2 | 149652.9 | 35.64 | -91463.52 |
| Ավստրիա | 2.4 | 4.4 | 0.00 | 639.1 | 1203.9 | 0.29 | -1199.47 |
| Բելգիա | 23195.4 | 43566.9 | 32.11 | 26402.3 | 49613.0 | 11.81 | -6046.09 |
| Ֆրանսիա | 90.3 | 169.6 | 0.12 | 3690.8 | 6961.0 | 1.66 | -6791.42 |
| Գերմանիա | 3119.1 | 5871.5 | 4.33 | 8582.6 | 16157.9 | 3.85 | -10286.34 |
| Իտալիա | 597.8 | 1124.2 | 0.83 | 6576.7 | 12354.0 | 2.94 | -11229.82 |
| Նիդերլանդներ | 389.4 | 726.6 | 0.54 | 5140.3 | 9663.3 | 2.30 | -8936.70 |
| Մեծ Բրիտանիա | 2541.1 | 4785.3 | 3.53 | 11049.4 | 20768.2 | 4.95 | -15982.91 |
| Հունաստան | 1018.4 | 1901.1 | 1.40 | 15160.5 | 28458.3 | 6.78 | -26557.17 |
| Իռլանդիա | 0.0 | 0.0 | 0.00 | 235.8 | 440.7 | 0.10 | -440.68 |
| Դանիա | 0.0 | 0.0 | 0.00 | 424.1 | 799.3 | 0.19 | -799.30 |
| Այլ երկրներ | 21.1 | 39.7 | 0.03 | 1720.6 | 3233.3 | 0.77 | -3193.62 |
| Շվեյցարիա | 1393.2 | 2617.6 | 1.93 | 3753.8 | 7050.9 | 1.68 | -4433.27 |
| Իրան | 1388.0 | 14362.5 | 10.59 | 17865.2 | 32394.6 | 7.71 | -18032.20 |
| Թուրքիա | 7661.4 | 534.4 | 0.39 | 9622.1 | 18066.6 | 4.30 | -17532.21 |
| Միաց.Արաբական էմիր. | 266.9 | 2115.3 | 1.56 | 9972.0 | 18740.3 | 4.46 | -16625.00 |
| ԱՄՆ | 1296.7 | 10699.3 | 7.89 | 23118.6 | 43523.6 | 10.36 | -32824.35 |
| Բուլղարիա | 5520.4 | 129.5 | 0.10 | 1352.9 | 2544.5 | 0.61 | -2415.00 |
| Այլ երկրներ | 190.5 | 16201.5 | 11.94 | 31240.8 | 58708.7 | 13.98 | -42507.23 |

2000թ. հունվար-հունիսին արտահանման ծավալի 22.7%-ն ուղղվել է ԱՊՀ երկրներ (այդ թվում 11.9%-ը՝ Ռուսաստանի Դաշնություն, 6.2%-ը՝ Վրաստան և 4.6%-ը՝ ԱՊՀ այլ երկրներ), 77.3%-ը աշխարհի այլ երկրներ, այդ թվում 42.9%-ը՝ ԵՄ երկրներ (որից 32.1%-ը՝ Բելգիա, 4.3%-ը՝ Գերմանիա, 3.5%-ը՝ Մեծ Բրիտանիա), 10.6%-ը՝ Իրան և 7.9%-ը՝ ԱՄՆ:

Ներմուծման ծավալի 21.2%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից 16.3%-ը՝

Ռուսաստանի Դաշնությանը), իսկ 78.8%-ը՝ աշխարհի այլ երկրներին, այդ թվում 35.6%-ը՝ ԵՄ երկրներին (որից 11.8%-ը՝ Բելգիային, 6.8%-ը՝ Հունաստանին), 10.4%-ը՝ ԱՄՆ-ին, 7.7%-ը՝ Իրանին և 4.3%-ը՝ Թուրքիային:

## Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը

### Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-հունիսին, ըստ առանձին ապրանքախմբերի

| | ԱՐՏԱՀԱՆՈՒՄ | | | ՆԵՐՄՈՒԾՈՒՄ | | | Հաշվե-կշիռը, հազ. $ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա ր ժ ե ք ը | | Տեսակ. կշիռը, %-ով | Արժեքը | | Տեսակ. կշիռը, %-ով | |
| | մլն.դրամ | հազ. $ | | մլն. դրամ | հազ. $ | | |
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | 72209.5 | 135668.6 | 100.00 | 223894.0 | 419939.8 | 100.00 | -284271.3 |
| այդ թվում՝ | | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 111.6 | 209.0 | 0.15 | 8867.3 | 16690.2 | 3.97 | -16481.17 |
| Բուսական ծագման արտադրանք | 449.5 | 834.4 | 0.62 | 26132.5 | 49184.9 | 11.71 | -48350.46 |
| Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր | 0.2 | 0.3 | 0.00 | 4743.9 | 8928.6 | 2.13 | -8928.29 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 5026.3 | 9451.6 | 6.97 | 16505.7 | 31001.0 | 7.38 | -21549.45 |
| Հանքահումքային արտադրանք | 8748.4 | 16449.1 | 12.12 | 44315.7 | 82345.7 | 19.61 | -65896.61 |
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք | 1002.9 | 1898.2 | 1.40 | 18917.2 | 35541.3 | 8.46 | -33643.15 |
| Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր | 1902.4 | 3561.8 | 2.63 | 4504.7 | 8448.6 | 2.01 | -4886.79 |
| Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր | 266.5 | 503.0 | 0.37 | 263.7 | 496.3 | 0.12 | 6.67 |
| Փայտ և փայտյա իրեր | 147.5 | 276.5 | 0.20 | 1171.2 | 2197.9 | 0.52 | -1921.45 |
| Թուղթ և թղթից իրեր | 90.0 | 168.1 | 0.12 | 4822.9 | 9066.7 | 2.16 | -8898.65 |
| Մանածագործական իրեր | 2874.8 | 5395.2 | 3.98 | 7993.9 | 14994.2 | 3.57 | -9598.97 |
| Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ | 186.5 | 350.3 | 0.26 | 1164.6 | 2184.3 | 0.52 | -1833.98 |
| Իրեր քարից, գիպսից,ցեմենտից | 833.1 | 1568.1 | 1.16 | 2245.0 | 4215.4 | 1.00 | -2647.32 |
| Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 33508.3 | 62960.5 | 46.41 | 30907.0 | 58128.7 | 13.84 | 4831.77 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 11153.0 | 20940.9 | 15.44 | 4895.5 | 9186.8 | 2.19 | 11754.15 |
| Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ | 4677.5 | 8782.7 | 6.47 | 32807.1 | 61664.3 | 14.68 | -52881.59 |
| Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 526.8 | 992.6 | 0.73 | 6704.0 | 12618.7 | 3.00 | -11626.07 |
| Սարքեր և ապարատներ | 516.7 | 974.4 | 0.72 | 3665.3 | 6901.6 | 1.64 | -5927.23 |
| Տարբեր արդյունաբերական ապրանքներ | 133.6 | 250.7 | 0.18 | 3248.2 | 6109.6 | 1.45 | -5858.88 |
| Արվեստի ստեղծագործություններ | 53.9 | 101.3 | 0.07 | 18.8 | 35.1 | 0.01 | 66.21 |

2000թ. հունվար-հունիսին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 46.4%-ը կազմել են մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 15.44%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (որի շուրջ 54 %-ը կազմում է ոչ թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը), 12.12%-ը՝ հանքահումքային արտադրանքը, 6.97%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 3.98%-ը՝ մանածագործական իրերը, 6.47%-ը՝ մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները: Ներմուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 25.2%, հանքահումքային արտադրանքը՝ 19.61%, մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 13.84%, մեքենաները, սարքավո-

ռումները և մեխանիզմները` 14.68%, բուսական ծագման արտադրանքը` 11.71%-ը, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանքը` 8.46%:

2000թ. հունվար-հունիսին առևտրային հաշվեկշիռը դրական է միայն չորս ապրանքախմբերի գծով, հիմնականում` ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբում` 11754.15 հազ. դոլար, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի, ոսկերչական իրերի խմբում`4831.77 հազ.դոլար, կաշվե հումքի, կաշվի, մորթու և դրանցից պատրաստված իրերի խմբում` 6.67 հազ. դոլար և արվեստի ստեղծագործությունների խմբում` 66.21 հազ. դոլար: Իսկ մնացած ապրանքախմբերում առևտրային հաշվեկշիռը բացասական է: Միայն սննդամթերքի գծով բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 95309.4 հազ. դոլար, հանքահումքային արտադրանքի գծով` 65896.61 հազ. դոլար:

**Արտահանման և ներմուծման ծավալների աճերի տեմպերը 2000թ. հունվար-հունիսին 1999թ. հունվար-հունիսի համեմատությամբ, ըստ ապրանքախմբերի**

| | Արտահանում | | | Ներմուծում | | աճի տեմպը (%) |
|---|---|---|---|---|---|---|
| | 1999թ. հունվար-հունիս, հազ. $ | 2000թ. հունվար-հունիս, հազ. $ | աճի տեմպը (%) | 1999թ. հունվար-հունիս, հազ. $ | 2000թ. հունվար-հունիս հազ. $ | |
| | | | | | | |
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | 116193.5 | 135668.6 | 116.76 | 369884.6 | 419939.8 | 113.53 |
| այդ թվում` | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 250.8 | 209.0 | 83.35 | 20396.3 | 16690.2 | 81.83 |
| Բուսական ծագման արտադրանք | 564.9 | 834.4 | 147.71 | 25792.9 | 49184.9 | 190.69 |
| Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր | 9.1 | 0.3 | 3.55 | 7616.1 | 8928.6 | 117.23 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 7112.1 | 9451.6 | 132.90 | 36749.7 | 31001.0 | 84.36 |
| Հանքահումքային արտադրանք | 21107.6 | 16449.1 | 77.93 | 89373.8 | 82345.7 | 92.14 |
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք | 1129.7 | 1898.2 | 168.02 | 35103.2 | 35541.3 | 101.25 |
| Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր | 4346.6 | 3561.8 | 81.94 | 7824.8 | 8448.6 | 107.97 |
| Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր | 367.8 | 503.0 | 136.77 | 595.5 | 496.3 | 83.34 |
| Փայտ և փայտյա իրեր | 47.5 | 276.5 | 581.66 | 1669.3 | 2197.9 | 131.67 |
| Թուղթ և թղթից իրեր | 688.6 | 168.1 | 24.41 | 8902.7 | 9066.7 | 101.84 |
| Մանածագործական իրեր | 7401.2 | 5395.2 | 72.90 | 15209.4 | 14994.2 | 98.58 |
| Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ | 431.3 | 350.3 | 81.23 | 2657.6 | 2184.3 | 82.19 |
| Իրեր քարից, գիպսից,ցեմենտից | 327.3 | 1568.1 | 479.11 | 5125.0 | 4215.4 | 82.25 |
| Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 45360.6 | 62960.5 | 138.80 | 40248.8 | 58128.7 | 144.42 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 16589.5 | 20940.9 | 126.23 | 12258.3 | 9186.8 | 74.94 |
| Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ | 7687.6 | 8782.7 | 114.24 | 31674.8 | 61664.3 | 194.68 |
| Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 1655.3 | 992.6 | 59.96 | 17915.8 | 12618.7 | 70.43 |
| Սարքեր և ապարատներ | 778.9 | 974.4 | 125.10 | 5148.8 | 6901.6 | 134.04 |
| Տարբեր արդյունաբերական ապրանքներ | 185.8 | 250.7 | 134.96 | 5615.4 | 6109.6 | 108.80 |
| Արվեստի ստեղծագործություններ | 151.6 | 101.3 | 66.81 | 6.3 | 35.1 | 552.16 |

Նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատ արտահանման ծավալի աճ է տեղի ունեցել հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի (38.8%-ով), քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի (68%-ով), պատրաստի սննդի արտադրանքի (32.9%-ով) ապրանքախմբերի գծով: Միևնույն ժամանակ, 22.1%-ով նվազել են հանքահումքային արտադրանքի, 18.1%-ով `

պլաստմասսայի և դրանցից իրերի, 27.1%-ով ՝ մանածագործական իրերի արտահանումը:

1999թ. հունվար-հունիսի համեմատությամբ 1.44 անգամ աճել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի, 1.9 անգամ բուսական ծագման արտադրանքի, 1.9 անգամ՝ մեքենաների և սարքավորումների, 1.34 անգամ՝ սարքերի ու ապարատների ներմուծումը: Միևնույն ժամանակ, 15.6%-ով նվազել են պատրաստի սննդի արտադրանքի, 29.6%-ով՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների, 7.9%-ով՝ հանքահումքային արտադրանքի, 25.1%-ով՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից իրերի ներմուծման ծավալները:

***Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի դինամիկան և աճի տեմպերն ըստ եռամսյակների:*** Ուսումնասիրելով արտաքին առևտրի դինամիկան եռամսյակային շարքում, անհրաժեշտ է նշել, որ առաջին եռամսյակների համեմատությամբ երկրորդ եռամսյակներում թե' արտահանման, և թե' ներմուծման բնագավառներում արձանագրվել է զգալի աճ: 2000թ. II եռամսյակում արտահանման զգալի աճ է արձանագրվել գյուղատնտեսական արտադրանքի, հանքահումքային արտադրանքի, պլաստմասսա և դրանցից իրերի, կաուչուկի և ռետինե իրերի, մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների արտահանման գծով: Ներմուծման բնագավառում նշանակալի աճ է արձանագրվել պատրաստի սննդի արտադրանքի, մանածագործական իրերի, կոշկեղենի, գլխարկների, հովանոցների, մեքենաների, սարքավորումների, մեխանիզմների և այլնի գծով:

**1999 և 2000թթ. I և II եռամսյակների արտահանման ծավալներն ըստ ապրանքախմբերի (հազար դոլարով)**

| | 1999թ. I եռամսյակ | 2000թ. I եռամսյակ | Աճի տեմպը 2000թ. I եռամսյակը 1999 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով | 1999թ. II եռամսյակ | 2000թ. II եռամսյակ | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 1999 թ. II եռամսյակի նկատմամբ, %-ով | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 2000 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| Ընդամենը | 59593.5 | 57957.9 | 97.3 | 56600.1 | 77710.6 | 137.3 | 134.1 |
| *այդ թվում՝* | | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 93.6 | 45.7 | 48.9 | 157.2 | 163.3 | 103.9 | 357.0 |
| Բուսական ծագման արտադրանք | 181.0 | 162.5 | 89.8 | 383.9 | 671.9 | 175.0 | 413.4 |
| Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր | 4.8 | 0.3 | 6.7 | 4.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 3038.7 | 4561.7 | 150.1 | 4073.4 | 4889.9 | 120.0 | 107.2 |
| Հանքահումքային արտադրանք | 10376.6 | 6803.1 | 65.6 | 10731.0 | 9645.9 | 89.9 | 141.8 |
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք | 455.9 | 1512.5 | 331.8 | 673.8 | 385.7 | 57.2 | 25.5 |
| Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր | 2349.4 | 746.6 | 31.8 | 1997.3 | 2815.2 | 141.0 | 377.1 |
| Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր | 216.3 | 321.3 | 148.5 | 151.4 | 181.7 | 120.0 | 56.5 |
| Փայտ և փայտյա իրեր | 6.9 | 92.2 | 1336.3 | 40.6 | 184.3 | 453.6 | 200.0 |
| Թուղթ և թղթից իրեր | 351.2 | 49.6 | 14.1 | 337.4 | 118.5 | 35.1 | 239.1 |
| Մանածագործական իրեր | 2799.4 | 2400.5 | 85.7 | 4601.8 | 2994.7 | 65.1 | 124.8 |
| Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ | 112.8 | 154.1 | 136.6 | 318.4 | 196.2 | 61.6 | 127.3 |
| Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 118.4 | 119.2 | 100.7 | 208.9 | 1448.8 | 693.5 | 1215.1 |

| | 1999թ. I եռամս-յակ | 2000թ. I եռամս-յակ | Աճի տեմպը 2000թ. I եռամսյակը 1999 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով | 1999թ. II եռամս-յակ | 2000թ. II եռամս-յակ | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 1999 թ. II եռամսյակի նկատմամբ, %-ով | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 2000 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 25632.5 | 29213.5 | 114.0 | 19728.0 | 33746.9 | 171.1 | 115.5 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 8221.7 | 7464.0 | 90.8 | 8367.8 | 13476.9 | 161.1 | 180.6 |
| Մեքենաներ, արքավորումներ և մեխանիզմներ | 4175.3 | 3178.2 | 76.1 | 3512.4 | 5604.5 | 159.6 | 176.3 |
| Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 800.4 | 566.4 | 70.8 | 855.0 | 426.2 | 49.8 | 75.2 |
| Սարքեր և ապարատներ | 481.4 | 444.3 | 92.3 | 297.4 | 530.1 | 178.2 | 119.3 |
| Տարբեր արդյունաբերական ապրանքներ | 84.8 | 79.3 | 93.5 | 101.0 | 171.4 | 169.7 | 216.2 |
| Արվեստի ստեղծագործու-թյուններ | 92.5 | 42.8 | 46.2 | 59.0 | 58.5 | 99.0 | 136.7 |

## 1999թ. և 2000թ. I և II եռամսյակների ներմուծման ծավալներն ըստ ապրանքախմբերի

*(հազար դոլարով)*

| | 1999թ. I եռամսյակ | 2000թ. I եռամսյակ | Աճի տեմպը 2000թ. I եռամսյակը 1999 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով | 1999թ. II եռամսյակ | 2000թ. II եռամսյակ | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 1999 թ. II եռամսյակի նկատմամբ, %-ով | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 2000 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| **Ընդամենը** | 180574.4 | 197741.2 | 109.5 | 189310.2 | 222198.7 | 117.4 | 112.4 |
| այդ թվում՝ | | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 8822.0 | 7931.5 | 89.9 | 11574.3 | 8758.7 | 75.7 | 110.4 |
| Բուսական ծագման արտադրանք | 10405.2 | 22796.5 | 219.1 | 15387.7 | 26388.4 | 171.5 | 115.8 |
| Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր | 4079.6 | 3862.9 | 94.7 | 3536.6 | 5065.8 | 143.2 | 131.1 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 17390.6 | 12477.0 | 71.7 | 19359.1 | 18524.0 | 95.7 | 148.5 |
| Հանքահումքային արտադրանք | 48034.7 | 44259.7 | 92.1 | 41339.1 | 38086.0 | 92.1 | 86.1 |
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերու-թյան ճյուղերի արտադրանք | 15371.0 | 16854.2 | 109.6 | 19732.2 | 18687.1 | 94.7 | 110.9 |
| Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր | 3483.1 | 3485.5 | 100.1 | 4341.8 | 4963.1 | 114.3 | 142.4 |
| Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր | 235.6 | 292.3 | 124.1 | 359.9 | 204.0 | 56.7 | 69.8 |
| Փայտ և փայտյա իրեր | 700.5 | 984.9 | 140.6 | 968.7 | 1213.1 | 125.2 | 123.2 |
| Թուղթ և թղթից իրեր | 4357.2 | 4647.3 | 106.7 | 4545.5 | 4419.4 | 97.2 | 95.1 |
| Մանածագործական իրեր | 6515.9 | 5229.1 | 80.3 | 8693.5 | 9765.0 | 112.3 | 186.7 |
| Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ | 1261.0 | 781.0 | 61.9 | 1396.6 | 1403.3 | 100.5 | 179.7 |
| Իրեր քարից, գիպսից,ցեմենտից | 2342.2 | 1824.4 | 77.9 | 2782.8 | 2391.0 | 85.9 | 131.1 |

| | 1999թ. I եռամսյակ | 2000թ. I եռամսյակ | Աճի տեմպը 2000թ. I եռամսյակը 1999 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով | 1999թ. II եռամսյակ | 2000թ. II եռամսյակ | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 1999 թ. II եռամսյակի նկատմամբ, %-ով | Աճի տեմպը 2000թ. II եռամսյակը 2000 թ. I եռամսյակի նկատմամբ, %-ով |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 19434.6 | 28042.1 | 144.3 | 20814.2 | 30086.6 | 144.5 | 107.3 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 5188.2 | 3875.9 | 74.7 | 7070.1 | 5310.8 | 75.1 | 137.0 |
| Մեքենաներ, սարքավորում-ներ և մեխանիզմներ | 17202.1 | 26702.7 | 155.2 | 14472.8 | 34961.6 | 241.6 | 130.9 |
| Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 10438.5 | 7038.0 | 67.4 | 7477.3 | 5580.7 | 74.6 | 79.3 |
| Սարքեր և ապարատներ | 2587.1 | 4066.7 | 157.2 | 2561.7 | 2834.9 | 110.7 | 69.7 |
| Տարբեր արդյունաբերական ապրանքներ | 2719.4 | 2589.5 | 95.2 | 2896.0 | 3520.2 | 121.6 | 135.9 |
| Արվեստի ստեղծագործու-թյուններ | 5.9 | 0.1 | 1.5 | 0.5 | 35.0 | 7208.9 | 397անգ. |